ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

«ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2024թ. մարտի 6-ին ժամը 12:30-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ»-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Հ. Ղուկասյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գ. Մարգարյանը, «ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Մ. Գ. Սարգսյանը, ընկերության բնապահպանական խորհրդատու Զ. Զուռնաչյանը, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ Հ. Ղուկասյանը նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրականացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Ընկերության բնապահպանական խորհրդատու Զ. Զուռնաչյանը ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջները:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր միաձայն աջակցեցին նախատեսվող գործունեությանը:

Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ, ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն մոտակա բնակավայրից:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ «ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող արևային կայանի կառուցման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գ. Մարգարյան

Զեկուցող՝ «ԻՇՏԻԿՈՒՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Մ. Գ. Սարգսյան

Արձանագրող՝ Հ. Դուկասյան